Ի ՏԵՐ ՀԱՆԳՅԱՎ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՇԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆԸ

Հուլիսի 13-ին, կյանքի 79-րդ տարում, երկարատև ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբան, Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Գերաշնորհ Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը:

Գերաշնորհ Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը ծնվել է 1926 թ.Հալեպ քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի Հայկազյան վարժարանում և այնուհետև, 1937-1939 թթ., Մխիթարյան հայրերի վարժարանում:

1939-1943 թթ. հաճախել է Հալեպի Ֆրերների դպրոց, որի ընթացքը փայլուն հաջողությամբ ավարտելով՝ նույն տարին ընդունվել է Անթիլիասի Դպրեվանք և ձեռնադրվել սարկավագ:

Ավարտելով Դպրեվանքի ընծայարանի լսարանական բաժինը՝ 1947 թ. կուսակրոն քահանա է ձեռնադրվել հոգելույս Տ. Դերենիկ եպս. Փոլատյանի ձեռամբ:

1947-1950 թթ. հետևել է Բրյուսելի համալսարանի գրականության և փիլիսոփայության դասընթացներին և ավարտելով ստացել գրականության և փիլիսոփայության պսակավորի աստիճան:

Այնուհետև դասավանդել է Անթիլիասի Դպրեվանքում և Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան միջնակարգ դպրոցում, իսկ 1952-1956 թթ. եղել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության դիվանապետը:

1965-1994 թթ. եղել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ, ուր վարել է դիվանապետի և կալվածոց տեսչի պաշտոնները: Երկար տարիներ եղել է նաև Ս. Աթոռի նվիրակը Ս. Հարության տաճարի նորոգության հանգանակության գործում:

Գերաշնորհ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը աշխատակցել է նաև «Սիոն» ամսագրին՝ կրոնագիտական և պատմափիլիսոփայական արժեքավոր ուսումնասիրություններով:

1965 թ. նոյեմբերի 7-ին եպիսկոպոս է ձեռնադրվել՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության և կանոնի ուսումնասիրման նպատակով 1982 թ. Երուսաղեմում հիմնում է Ձիթենյաց լեռան Հայ Աստվածաշնչի կենտրոնը:

1975-1985 թթ. լինելով Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, գործուն մասնակցություն է ունեցել Հայոց Եկեղեցու, Մայր Աթոռի եկեղեցա-կազմակերպչական, քարոզչական գործունեությանը, ինչպես նաև դասախոսություններով հանդես եկել Գևորգյան Հոգևոր Ճեմարանում և Վազգենյան Դպրանոցում, նպաստել Հայոց Եկեղեցու միջազգային կապերի ընդլայնմանն ու ամրապնդմանը:

1994 թ. Շահե արքեպս. Աճեմյանը տեղափոխվել է Հայրենիք, ուր 1995 թ. Երևանի Պետական Համալսարանի կազմում կյանքի է կոչել Աստվածաբանության Ֆակուլտետը՝ հիմնելով և գիտա-աստվածաբանական «Աճեմյան մատենաշարը»:

Շահե Սրբազանը հայտնի է իր գիտական-մանկավարժական գործունեությամբ և հեղինակ է մի շարք աշխատությունների և հոդվածների:

Բազմավաստակ Սրբազան Հոր մահը մեծ կորուստ է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Երևանի Պետական Համալսարանի համար:

«Ցիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ՀՂ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ